



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-1-Ե-1
2012թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

*նախագահությամբ՝ Ա. Ավագյանի,
մասնակցությամբ ԱԽ անդամներ՝ Լ. Ասրյանի, Մ. Ավանեսյանի, Ս. Արզումանյանի,
Ա. Լազարյանի, Հ. Խաչատրյանի, Կ. Ղարայանի,
Կ. Մարդանյանի, Կ. Մաղյանի, Մ. Սաֆարյանի,*

քարտուղարությամբ՝ Գ. Հովհաննիսյանի,

2012 թվականի ապրիլի 27-ին Ստեփանակերտ քաղաքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նստավայրում, դռնփակ նիստում, քննության առավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի դատավորի թափուր պաշտոնում թեկնածություն առաջարկելու վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մահմանադրության 116-րդ հոդվածի 2-րդ կետով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով և 98-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար Հովհաննես Վալերիի Գրիգորյանի թեկնածությանը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին առաջարկել Հովհաննես Վալերիի Գրիգորյանի թեկնածությունը՝ ազատելով նրան ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնից:

ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԱՎԱԳՅԱՆ